# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ԻՐԱՔ, ԲԱՂԴԱԴ

Վերջերս Մայր Աթոռ ս. Էջմիածին ուղարկած Իրաքի հայոց բարեխնամ առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի զեկուցագրից քաղվածաբար հրապարակում ենք մի շարք տեղեկություններ թեմի ազգային- եկեղեցական, մշակութային ու կրթական կյանքի մասին:

Ուրախությամբ արձանագրում ենք, որ վերջին մի քանի տարիների ընթացքում առաջնորդ սրբազանի և տեղի թեմական ազգային իշխանությունների համերաշխ գործակցությամբ թեմը բոլորում է ծաղկուն և բարգավաճ գործունեության մի շրջան՝ ի միսիթարություն Վեհափառ Հայրապետի և հուրախություն մեր հավատացյալ ժողովրդի:

Թեմում անցնող երկու տարիների ընթացքում սկսվել է և իր բարեհաջող ընթացքի մեջ է գտնվում եկեղեցադպրոցաշինական գործունեությունը:

1967 թվականին հիմնովին վերանորոգվել է Բաղդադի ս. Աստվածածին մայր եկեղեցին, կառուցվել են դպրոցներ Պասրա, Մուսուլ և Քերքուք քաղաքներում և մեկ դարմանատուն (պոլիկլինիկա)՝ Բաղդադի դպրոցի համար՝ Կյուլպենկյան հաստատության կողմից:

Բաղդադի ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգման մասին սրբազանը գրում է.

«Հոս այս տարի հիմնեն նորոգեցինք Պաղտատի և ամբողջ Իրաքի հայոց պատմական հին եկեղեցին՝ ս. Աստվածածինը, որը շուրջ 350 տարվան հնություն ուներ և ուխտատեղի՝ քաղաքիս բոլոր կրոններու և հարանվանությանց, իր ս. Աստվածածնի հրաշագործ պատկերովը և քառասուն Մանկանց նշխարներով: Եկեղեցին հիմեն վար առնվեցավ և նույնությամբ վերակառուցվեցավ՝ արդյամբ և ծախյուք Արամ Ղարապյանի, բարեպաշտ ազգային»:

Բացի հիշյալ արդեն ավարտված շինությունները, ծրագրում կա վերանորոգել և կառուցել մի շարք այլ եկեղեցիներ և դրպրոցներ.

«Պաղտատի մեջ ունինք ազգային վարժարաններ, մին 1400 աշակերտներով, մյուսը՝ շուրջ 200 աշակերտներով: Կյուլպենկյան հիմնարկության հետ բանակցության մեջ ենք, որ երրորդ մը կառուցանե մեզի համար, երկրորդականի համար:

Մուսուլեն ավելի հյուսիս, Զախո ավանին մեջ ունինք շուրջ 130 քրտախոս հայ ընտանիքներ, մոտավորապես 500 մանուկներով, անոնց համար ալ եկեղեցի մը շինելու ծրագիրն ու նախապատրաստությունները ունինք հառաջիկա տարվան ընթացքին, Կյուլպենկյան հիմնարկության օժանդակությամբ»:

Վերոհիշյալ մեջբերումները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ ճիգեր է գործադրում Իրաքի, տնտեսապես ոչ լայն հնարավորություններով հայ գաղութը, որը հաշվվում է շուրջ 18000 անձ, որպեսզի հարատևի ապրել, որպես հայ իր մատաղ սերունդին ևս կրթելով ու դաստիարակելով հայեցիորեն՝ հայ եկեղեցու շնչի տակ:

Ի նկատի առնելով այս բոլորը, Ամենայն Հայոց Վեհափառ և Սրբազնագույն կաթողիկոսը՝ Վազգեն Ա-ը, իրավամբ գնահատում է Իրաքի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի և տեղի թեմական ազգային իշխանությունների թափած ջանքերը և Իր օրհնությունն է բաշխում Իրաքի ազգասեր ու եկեղեցասեր հավատավոր գաղութին:

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ,